«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ներառական կրթության առանձնահատկությունները և առկա դժվարությունները

Առարկան՝ Աշխարհագրություն

Հետազոտող ուսուցիչ՝ Միդա Մաղոյան

Ուսումնական հաստատություն՝ 70 հիմն. դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….....3
ԳԼՈՒԽ I ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ…….
.5
ԳԼՈՒԽ I I ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԿԱ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……..
11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ…….....18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ասել է Ուիլյամ Ուորդը. <<Սովորական ուսուցիչը պատմում է, լավ ուսուցիչը բացատրում է, հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է>>:Անհնար է չհամաձայնել այս հանճարեղ մտքի հետ: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է բոլոր երեխաներին՝ ներառյալ որոշակի խնդիրներ կամ կարիքներ ունեցող երեխաներին՝ հաստատելով այն գաղափարը, որ բոլոր մարդիկ հավասար են և ունեն իրավունք կրթվելու՝ անկախ ֆիզիկական կամ մտավոր որևէ խնդրից:

Անդրադառնալով մեր հետազոտման թեմային՝ նշենք, որ մեր ուսումնասիրության թեման է <<Ներառական կրթության առանձնահատկությունները և առկա դժվարութնունները>>: Նախ փորձենք պարզաբանել՝ ի՞նչ ասել է ներառական կրթություն: Ներառական կրթական համակարգը ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ որոշակի խնդիրներ կամ կարիքներ ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը:

Ստորև ներկայացրել ենք հետազոտական աշխատանքի նպատակները, խնդիրները, աշխատանքի նշանակությունը և արդիականությունը:

Հետազոտության նպատակները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ներառական կրթության առանձնահատկությունները և առկա դժվարությունները: Վեր հանել այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են ներառական կրթությանը:

Հետազետության խնդիրները: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել ներառական կրթության առանձնահատկությունները:
2. Վեր հանել այն յուրահատկությունները, որոնք առկա են տվյալ ոլորտում:
3. Առանձնացնել այն դժվարությունները, որոնք առաջ են գալիս ներառական կրթության ոլորտում:
4. Գտնել ուղիներ, միջոցներ, մեթոդներ, որոնք ավելի կբարելավեն ներառական կրթությունը:

Հետազոտության նշանակությունը: Ներառական կրթության համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել ներկա իրավիճակը, բացահայտել խնդիրները, առավելությունները և թերությունները այդ ոլորտում:

Հետազոտության արդիականությունը: Ներառական կրթության գաղափարի երեշխիքը մարդու կրթության իրավունքն է: Այն հիմք է ավելի արդար հասրակության կառուցման: Ներառումը արժեքային համակարգ է, ըստ որի բոլոր աշակերտներն ունեն կրթության հասանելիության հավասարաչափ իրավունք կրթության բոլոր մակարդակներում: Եւ մեր ուսումնասիրության թեման արդիական է այնքանով, որ ներառական կրթության ծրագիրը այսօր դեռևս իրականացման փուլում է: Ներառական կրթությունը, կարելի է ասել, որ դեռևս լիովին ձևավորված չէ, այսինքն իր առջև դեռևս չլուծված խնդիրներ ունի:

Մենք մեր հետազոտական աշխատանքի գլուխներում համակողմանիորոն անդրադարձել ենք ներառական կրթության առանձնահատկություններին և դրա իրականացման արդի դժվարութնուններին,որոնք կներկայացնենք ստորև:

ԳԼՈՒԽ I
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բոլոր մարդիկ ի ծնե հավասար են և ազատ: Ազատությունը ի վերուստ է տրված մարդկանց, իսկ կրթությունը հենց ինքը՝ ազատությունն է : Եւ յուրաքանչյուր ոք ունի կրթությունից օգտվելու իրավունք: Ահա այս գաղափարն էլ ընկած է ներառական կրթության հիմքում: Կարճ ասած՝ ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին՝ ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքին:

Ներառումը ընդգրկուն հասկացություն է, որը սահմանվել է 1990թ.–ին Ջոմթիենի հռչակագրով խթանվող՝ Միավորված ազգերի կազմակերպության << Կրթությունը բոլորի համար>> օրակարգի շուրջ միջազգային քննարկումների համատեքստում: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունները, համալսարանները,դպրոցները և ՅՈՒՆԵՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակը կարևոր դեր են կատարել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական միջավայր ներառելու անհրաժեշտության հարցում՝ ուշադրություն հրավիրելու առումով: Բոլոր երեխաները՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները, ունեն կրթության իրավունք: Այս պնդումը համահունչ է ՄԱԿ-ի՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ներառական կրթությանը վերաբերող ընդհանուր մեկնաբանություն 4-ի հետ, որը կրթությունը սահմանում է որպես. << սկզբունք, որն արժևորում է բոլոր սովորողների բարօրությունը,հարգում է նրանց արժանապատվությունը ու ինքնուրույնությունը և ընդունում է հասարակության մեջ արդյունավետորեն ներառվելու ու իրենց նպաստը բերելու անհատների պահանջմունքները և կարողությունները[1]:

Կարող ենք ասել, որ ներառական կրթությունը ընդունում է այն հստակ համոզումը,որ բոլոր երեխաները տարբեր են,և հանրակրթական համակարգը պետք է հարմարվի բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման անհատական պահանջմունքներին:Այնուամենայնիվ ներառական կրթության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ներառումը դեռևս չի նշանակում բոլորին ձուլել կամ միատեսակ դարձնել, այլ ընդհակառակը՝ այն ընդունում է, որ յուրաքանչյուր երեխա սովորում է տարբեր կերպ և տարբեր արագությամբ: Այս առումով ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝

[1] <<Ներառական կրթության ռազմավարությունները>> դասագիրք: Մինեապոլիս, Մինեսթոթա, Մանկավարժական համալսարան:Երևան, Հայաստան 2018:

ուսուցման գործընթացի ճկունությունը ապահովելու համար: Պարզապես յուրաքանչյուր ուսուցիչ պետք է գիտակցի, որ երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում,որն էլ իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին,զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող մեթոդների օգտագործում:

Ներառական կրթության առանձնահատկություններից կարևորագույնն այն է, որ այն հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքում և չմեկուսանալ ընտանիքից: Չէ՞ որ համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներ երեխաներին տեղափոխելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին:Եւ, ի վերջո եկեք արձանագրենք մի կարևոր փաստ. յուրաքանչյուր մարդ, կլինի հատուկ կարիքներ ունեցող,թե բնականոն զարգացում ունեցող, կարիք ունի շփման, գնահատանքի և սոցիալականացման:

Ուրեմն հատուկ կարիքներ ունեցող և որոշակի խնդիրներով մարդիկ է՛լ ավելի շատ կարիք ունեն շփման, և ոչ մի հանգամանք չպետք է խոչընդոտի նրանց շփմանը հասրակության հետ: Ներառական կրթության առանձնահատկությունն էլ կայանում է հենց նրանում, որ այդ համակարգը ընդունում է, որ երեխան ունի իրավունք լինել հասարակության լիիրավ անդամ, իսկ պետությունը

պարտավորվում է պայմաններ ստողծել այդ իրավունքը իրականություն դարձնելու համար: Այսպիսով՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը իր փոխարեն չեն որոշում, այլ տրվում է հնարավորություն բացահայտելու իր բոլոր առանձնահատկություններով և դրսևորելու իր համար հաղթահարելի ձևով:

Մյուս կարևոր առանձնահատկությունը այն է, որ ներառական կրթական համակարգը ընդունում է, որ կրթությունը պետք է բխի այն գաղափարից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Այսինքն՝ շեշտը դրվում է երեխայի ուժեղ կողմերը զարգացնելու, իսկ թույլ կողմերը ուժեղացնելու, կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը գնահատելու և միջավայր ապահովելու վրա: Այսինքն՝ ուսուցիչը պետք է արձանագրի ոչ թե այն, որ երեխան ունի << ֆիզիկական կամ մտավոր արատներ>>, այլ տարբեր պատճառներով ունի դժվարություններ՝ կրթությանը լիարժեք մասնակցելու համար:Մարդու արժեքը կախված չէ նրանից, թե նա ինչ գիտելիքներ կամ հմտություններ ունի: Յուրաքանչյուր մարդ ի վիճակի է մտածել, սովորել և զարգանալ: Ներառական կրթությունը կենտրոնանում է ոչ թե այն բանի վրա, թե ինչը աշակերտը չի կարող սովորել, այլ այն բանի վրա, թե ինչ գիտի և կարող է իմանալ:

Ներառական կրթությունը բնութագրվում է վեց առանձնահատկություններով. 1. կրթությունը պետք է հիմնվի բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքի վրա, 2. Կրթությունը պետք է կազմակերպվի այնպիսի մեթոդներով և մոտեցումներով, որոնք ուղղված են յուրաքանչյուր երեխայի առանձնահատկություններից բխող կարիքների բավարարմանը, 3. Դպրոցները պետք է մշակեն այնպիսի առարկայական պլաններ, որոնք կբալանսավորեն միասնականությունը և յուրահատկությունը, 4. Դպրոցը պետք է բացահայտի և չեզոքացնի ուսումնական կյանքում լիարժեք մասնակցությանը խոչընդոտող գործոնները բոլոր աշակերտների համար, 5. Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթացի կազմակերպման

և կառավարման խորքային և երկարաժամկետ փոփոխությունները,
6. Ներառական կրթությունը ենթադրում է աջակից կառույցների և ռեսուրսների ստեղծում՝ ուսուցչական, ադմինիստրատիվ անձնակազմի, ծնողների և ներառական համակարգի այլ շահառուներ [2]:

Ի վերջո ինչի՞ց է սկսվում ներառական կրթությունը, որի արդյունքում երաշխավորվում է որակյալ կրթությունը: Միանշանակ սկսվում է մանկավարժի վերաբերմունքից (սիրտ), հմտության

(ձեռք), և գիտելիքի (գլուխ) եռամիասնության դրսևորումից:

Առանց այս հավասարության եռանկյունու գոյության շատ դժվար կլինի խոսել որակյալ կրթության մասին, ուստի ուսուցիչներն և դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները իրենց մեջ պետք է ունենան այս հավատմունքը՝սիրտ (վերաբերմունք), գլուխ (գիտելիք), և ձեռք (հմտություն), որոնցով նրանք կհաղթահարեն բոլոր այն դժվարությունները, որոնց նրանք բախվում են ամեն օր[3]:

Ամփոփելով հետազոտական աշխատանքի այս գլուխը՝ բերենք մի օրինակ, որը կհավաստի մեր վերը ասվածները.

Մի անգամ երիտասարդ Թոմաս Էդիսոնը տուն է վերադառնում դպրոցից և մի նամակ փոխանցում իր մորը: Մայրը արցունքներն աչքերին բարձրաձայն կարդում է. << Ձեր տղան հանճար է: Այս դպրոցը շատ փոքր է, և այստեղ չկան ուսուցիչներ, ովքեր կկարողանան նրան ինչ-որ բան սովորեցնել: Խնդրում եմ, նրան ինքներդ սովորեցնեք>>: Մոր մահից տարիներ անց, Թոմասը

[2] Հ.Հ- ում ներառական կրթության իրականացման գնահատում:Կրթության հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն:Երևան,2013,20 էջ:
[3] Ներառական կրթություն:Ուսումնական ձեռնարկ:Երևան,2017, 42 էջ:

հայտնի էր որպես ամենահայտնի գիտնականներից մեկը: Օրերից մի օր նա նայում է ընտանեկան արխիվը և հանկարծ գտնում այդ նամակը: Այնտեղ գրված էր հետևյալը. <<Ձեր տղան մտավոր հետամնաց է: Մենք այլևս չենք կարող նրան դասավանդել դպրոցում այլ աշակերտների հետ: Խորհուրդ ենք տալիս Ձեզ, որ Դուք ինքներդ նրան սովորեցնեք տանը>>: Էդիսոնը լաց էր լինում ժամեր շարունակ…

Ուրեմն եկեք ընդունենք կարևոր մի փաստ՝ խոսքը ուժ է: Այն կարող է և՛ թևեր տալ, և՛ մոխրացնել…

ԳԼՈՒԽ I I
ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԿԱ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

[4]

Ըստ օրենքի՝ ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար,այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին

[4]Ս. Պետրոսյան: ներառական կրթությունը գործնականում:Ուսումնական ձեռնարկ:Երևան,Ասողիկ,2018:Էջ 7:

համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացի առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով ահմանված արդյունքի ապահովումն է [5]: Սակայն,շատերի մոտ ներառական կրթություն հասկացությունը թողնում է թյուր տպավորություն: Շատերը մտածում են, թե ներառական կրթությունը նախատեսված է սոսկ ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար, սակայն համակարգի խորքային ընկալումը փաստում է, որ ներառականությունը շատ ավելի լայն գաղափար է, որի հիմքում ընկած է ոչ թե կոնկրետ երեխայի կամ երեխաների խմբի կրթության իրավունքի ապահովումը, այլ յուրաքանչյուր երեխայի կրթական առանձնահատկությունների վրա հիմնված կրթություն ստանալու հիմնարար իրավունքի ապահովումը:

Եւ չնայած բազնաթիվ օրենսդրական կարգավորումներին, Հարայստանում ներառական կրթության գործընթացը հասարակական, դպրոցական և դասարանային մակարդակներում դեռևս հանդիպում է դժվարությունների: Առանցքային խնդիրներից է այն հարցը՝ արդյո՞ք ճիշտ է, որ հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները սովորեն հասակակիցների հետ նույն դասարանում, թե՞ ավելի ճիշտ է, որ նրանք սովորեն հատուկ հաստատություններում: Մենք մեր աշխատանքի նախորդ գլխում անդրադարձել ենք այս հարցին և պարզաբանել ենք, որ յուրաքանչյուր ոք ունի շփման կարիք: Եւ դպրոցները,որդեգրելով ներառականության քաղաքականությունը,պարտավոր են պատրաստել ուսուցիչներին և ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր կզգա իրեն ընդունված և կստանա իր կարիքներին համապատասխան որակյալ կրթություն;Հնացած, ոչ ճիշտ բնորոշումները խորացնում են կարծրատիպերը հաշմանդանություն ունեցող կամ առանձնահատուկ կրթության կարիք ունեցող մարդկանց մասին և ուժեղացնում են շփման արգելքները; Իսկ դա շատ ավելի մեծ խնդիր է դառնում նման երեխաների համար:

[5] Տե՛ս նույն տեղում,էջ 8:

[6]

Ոչ բոլոր երեխաներն են հանդուրժող: Հաճախ նրանք դաժան են նրանց նկատմամբ, ովքեր մի փոքր <<այդպես չեն>>: Հետևաբար դպրոցում, առաջին հերթին, անհրաժեշտ է աշխատել երեխաների հետ: Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է ամրապնդված:Պատճառներն են՝ տեղեկության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է:Ուսուցիչը պարտավոր է դասարանի երեխաներին բացատրել, որ անկախ որևէ ֆիզիկական կամ այլ խնդրից, այդ երեխաները ևս աշակերտներ են:Պետք է աշակերտներին բացատրել՝ արդյո՞ք իրենք կցանկանային, որ ճանաչեն իրենց խնդիրներով,թե՞ մի շարք դրական հատակնիշներով,որոնք յուրանքանչյուրին դարձնում են անհատ: Եթե հաշմանդամություն կամ որևէ այլ խնդիր ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոց, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք այդ երեխաների նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցութոյւնը, որ հաշմանդամություն կամ որևէ այլ խնդիր ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

Մարդիկ տարբեր են, դա բնական է, և այդ տարբերություններն էլ ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և հետևաբար, այն պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր մոտեցումներ (այդ թվում՝ անհատական մոտեցումներ) ու հնարներ:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 26:

Երեխաների դժվարությունները կրթության մեջ կարող են շատ տարբեր լինել: Օրինակ, նրանք կարող են դժվարություններ ունենալ կարդալիս, գրելիս, թվերի հետ աշխատելիս կամ շրջապատի մարդկանց հետ հաղորդակցվելիս, որի համար նրանց պետք է օգնել՝ լրացուցիչ աջակցելով դպրոցում և համագործակցաբար աշխատելով ծնողների հետ: Երեխաների մի խմբի համար այդ դժվարությունները կարող են պայմանավորված լինել հաշմանդամությամբ, որը հանրակրթական ծրագրի յուրացումը դարձնում է ավելի բարդ: Որոշ երեխաների համար այդ խնդիրները ժամանակավոր դժվարություններ են հանդիսանում, մինչդեռ մյուսների համար դրանք կարող են լինել երկարատև և մշտական մասնագիտական աջակցություն պահանջող խնդիրներ[7]: Ամեն մի փոքրիկ հաջողություն կարող է մեծ նշանակություն ունենալ երեխայի կյանքում: Ուստի յուրաքանչյուր մանկավարժ պիտի կարողանա տեսնել երեխաների մեջ այն լուսավորը և ուժեղ կողմը,որի միջոցով նա հնարավորություն կունենա դրսևորելու իրեն: Այսպիսով՝ երեխայի համակողմանի բնական զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ներառական կրթությունը համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Այս տեսանկյունից յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի որակյալ կրթության ապահովմանը խոչընդոտող գործոններ կարող են լինել իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսուցման նյութերը, ուսուցիչների վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները, հենաշարժողական համակարգի խանգարումներ ունեցող երեխաների համար դպրոցում տեղաշարժվելու սահմանափակումները և այլն:

[7] Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ: Երևան, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018, 3 էջ:

Ինչպես արդեն նշվեց, ներառական կրթությունը ձգտում է մշակել աշակերտակենտրոն այնպիսի մեթոդաբանություն,որը միանշանակ ընդունում է, որ բոլոր երեխաները զանազան կրթական պահանջմունքներով օժտված անհատներ են: Ներառական կրթության պահանջները ուսումնառության դասավանդման և դաստիարակության գործընթացներն առավել արդյունավետ, հետաքրքիր, ակտիվ դարձնելու հնարավորություն են ստեղծում, ինչի արդյունքում կշահեն ոչ միայն հատուկ կարիքներ ունեցողները, այլև բոլոր սովորողները:

Այսպիսով՝ պետք է նշենք, որ ներառական կրթության առկա դժվարություններից մեկն էլ ուսումնական ծրագրերի անհասկանալիությունն ու անմատչելիություն է: Այնինչ ներառման չափազանց կարևոր չափանիշներից մեկը հանրակրթական ուսումնական ծրագրերի հասանելիությունն է , ինչպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների,այնպես էլ չունեցող աշակերտների համար: Եւ, որպեսզի Հայաստանում բոլոր աշակերտները կարողանան արդյունավետորեն ձեռք բերել տարրական գիտելիքներ, անհրաժեշտ է ուսուցիչներին զինել տարբերակված և անհատականացված ուսուցում իրականացման կարողությամբ: Նեռարական միջավայրում այսօր առանցքային հարցերից մեկը ուսուցիչների կողմից զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաներին դասավանդելու պատրաստվածության պակասն է: Այսպիսով, դաս պլանավորելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր աշակերտի ընդունակությունները: Հարկավոր է դպրոցներում կիրառել տարբրակված ուսուցում: Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տարբերակված ուսուցման կիրառումը կարևոր մոտեցում է, այն նպաստում է բոլոր երեխաների կրթական կարիքների հաշվի առնելուն: Այլ կերպ ասած՝ տարբերակված ուսուցումը, նույն նյութի դասավանդումն է տարբեր մոտեցումներով:

Հայաստանի դպրոցների ուսումնական ծրագրերը դժվար հաղթահարելի են աշակերտների համար: Այս խնդիրներն էլ ավելի սուր է դրված ԿԱՊԿՈՒ երեխաների համար: Որքան էլ ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը իրականացվում է ԱՈՒՊ-ով,այն պետք է հիմնավորված լինի պետական չափորոշիչների և ծրագրերի վրա: Սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված արդյունքի ամփոփումը իրականացվում է կիսամյակի ավարտին՝ նկարագրական տեքստով, որը սովորողի առաջադիմության թերթիկի հետ միասին տրամադրվում է ծնողին: Սովորողի կրթության առաջընթացի ընթացիկ գնահատումը կատարվում է ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան[8]:

Մեր հետազոտությունից արդեն պարզ է, որ ներառական կրթական ոլորտում կան մի շարք խնդիրներ՝ սկսած տարբեր խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ վերաբերմունքից մինչև յուրաքանչյուր երեխայի համար՝ այդ թվում ԿԱՊԿՈՒ՝ զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ապահովումը: Կարևոր է գտնել այս ոլորտի դժվարությունները և հաղթահարել,որպեսզի այդ դժվարություններից չտուժեն երեխաները:

[8] Տե՛ս նույն տեղում,11 էջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշել ենք,յուրաքանչյուր մարդ ի ծնե ազատ է, իսկ ազատությունն ի վերուստ է տրված բոլորին: Կրթությունն էլ հենց ինքը ՝ ազատությունն է: Անկախ որևէ ֆիզիկական կամ մտավոր խնդրից՝ յուրաքանչյուրս այս երկնքի տակ իրավունք ունենք ազատ ապրել և կրթություն ստանալ: Այս ամենը մենք կարելվոյն չափով հիմնավորել ենք մեր աշխատանքի գլուխներում:

Մեր կատարած ուսումնասիրության հիման վրա եզրակացրել ենք հետևյալները.

- Կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունք ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում:
- Երեխայի համակողմանի և բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:
- Կրթությունը պետք է բխի այն գաղափարից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել ու ստեղծագործել:
- Դպրոցները որդեգրելով ներառական քաղաքականություն՝ պարտավոր են պատրաստել ուսուցիչներին և ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր երեխա կզգա իրեն ընդունված և կստանա իր կարիքներին համապատասխան որակյալ կրթություն:
- Որպեսզի Հայաստանում բոլոր աշակերտները կարողանան արդյունավետորեն ձեռք բերել տարրական գիտելիքներ, անհրաժեշտ է ուսուցիչներին զինել տարբերակված և անհատականացված ուսուցում իրականացնելու կարողությամբ:
- Եթե դպրոցում գործում է ներառման համակարգը, ապա տարբերակված ուսուցումը այլևս դասավանդման տարբերակ չէ, այլ անհրաժեշտություն:

Եզրափակելով մեր հետազոտական աշխատանքը՝ ևս մեկ անգամ նշենք առաջին հայացքից աննշան թվացող, բայց իրականում

ամենակարևոր գաղափարներից մեկը. Խոսքը ուժ է,այն կարող է և թևեր տալ և մոխրացնել:ՈՒստի խոսքերը արտաբերելիս հարկավոր է կշռադատել և չկոտրել երեխաներին:



Ճիշտ է, ուսման մեջ դժվարություններևը հնարավոր չէ ամբողջությամբ վերացնել ,սակայն երեխաներին ոգևերելու և համապատասխան միջամտությունը աշակետին կարող է մղել մեծ հաջողությունների և ձեռքբերումների: Նշենք,որ ուսման մեջ դժվարություններ են ունեցել մի շարք հայտնի մարդիկ՝ Ագաթա Քրիստին,հատնի ֆիզիկոս Ալբերտ էյնշտեյնը,Թոմաս էդիսոնը:
Այսպիսով՝ պարզ է դառնում, թե ինչքան մեծ է յուրաքանչյուրիս նեդրումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմաններևի կարիք ունեցող երեխաների զարգացման,դաստիարակման, ինքնուրույն կյանքի նախապատրաստման և այլ գործընթացներում:
ՈՒրեմն եկեք ընդունենք բոլոր երեխաներին այնպիսին, ինչպիսին նրանք ծնվել են և հիշենք՝
Եթե երեխան անընդհատ քննադատվում է,
նա սովորում է մեղադրել:
Եթե երեխան ծաղրանքի է ենթարկվում,
նա դառնում է ամաչկոտ:
Եթե շրջապատող աշխարհը թշնամանքով է վերաբերվում,
Երեխան պատրաստվում է պաըքարի:
Եթե երեխան ապրում է ամոթանքի ենթարկվելով,
ապա նրան չի լքում մեղքի զգացումը:

Եթե երեխան ապրում է համաձայնությամբ,
ապա նա համբերատար է լինում:
Եթե երեխան խրախուսվում է քնքշորեն,

նա վստահում է մարդկանց:
Եթե երեխային արժանապատվորեն են վերաբերվում,
նա սովորում է գնահատել:
Եթե երեխան ապրում է ազնվությամբ,
Արդարամիտ է դառնում:
Եթե երեխան ապրում է անվտանգության մեջ,
Սովորում է հավատալ:
Եթե երեխան խրախուսվում է,
Սովորում է գնահատել իրեն:
Եթե երեխան ընդունված է և բարեկամությամբ է շրջապատված,
Սեր կգտնի այս աշխարհում[9]:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Տեսական գրականություն

1. Երբ ընտանիքում ծնվում է հատուկ կարիքներով երեխա,Ն. Հ. Վանյան, Երևան,<<Ասողիկ>> հրատարակչություն, 2008.-38 էջ:

2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում: Մեթոդական ուղեցույց: Երևան, հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2018.-150 էջ:

3. Հ. Հ.-ում ներառական կրթության իրականացման գնահատում: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն,Երևան,2013.-56 էջ:

4. Ներառական կրթությունը գործնականում,ուսումնական ձեռնարկ: Ս. Պետրոսյան,Երևան,<< Ասողիկ>> հրատարակչություն, 2018.- 100 էջ:

5. Ներառական կրթության ներդրման հիմնախնդիրները և առաջարկվող լուծման ուղիները միջին մասնագիտական կրթության համակարգում, Ս. Պողոսյան,Երևան, 2017.- 73 էջ:

[9] Ն. Վանյան։Երբ ընտանիքում ծնվում է հատուկ կարիքներով երեխա։Երևան <<Ասողիկ>> հրատարակչություն,2018, 29 էջ։

6. Ներառական կրթության ռազմավարությունները,դասագիրք: Մինեպոլիս, Մինեսոթա,մանակավարժական համալսարան, Երևան, 2018.- 252 էջ:
7. Ներառական կրթություն:ՈՒսումնական ձեռնարկ,-Երևան 2017.- 146 էջ:

Համացանցային աղբյուրներ

1. **http://ysu.am/files/21M_Danielyan.pdf**
2. http://armavirdc.org/files/24-10-2019-10-55-42-%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D6%89%20%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%4%D5%B7%D5%BF%D5%A1%D5%A4%D5%AB%D5%BF%D5%A1%D6%80%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D6%89.pdf
3. **https://www.academia.edu/39891058/Hasmik_Harutyunyan**